

ԻՐԱՎՈՒՆԿ

ԼՐԱԳԻՐ ԱԶԳԱՅԻՆ ԵՒ ՔԱՂԱՔ

ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԻ ԱՄԵՆ ՉՈՐԵՔԶԱՐԹԻ ԵՒ ՀԱՐԱՐ

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Պաշտարանի համար Տարեկան 12 ֆր.
» » » Կեցանական 6 ֆր.
Արտատպանի համար (երկու քիտր մեկ
ծրարով) Տարեկան 14, վեցամսեայ 7 ֆր.
ԿԱՆՈՒԻ ՎՃԱՐՆԵԼԻ

Համակիր արտադրող զրկելի մեղեկապ հասցեով

ԽՐԱՎՈՒՆԿԻ ԼՐԱԳՐԱՅ. — Վ.Ս.Ն.Ա. (Պաշտարան)
Редация на вѣстникъ
«Иравункъ»
B A R N A (Bulgarie)

Rédaction du journal
„Ira vounk“
V A R N A (Bulgarie)

Խմբագրության աշխատանքը իրական
ես չեն զրկվում և չեն հաշվարկվում
ներքին միայն կը հրատարակվեն առ-
անցանքով կամ մասամբ:
Մանկական տղա 20 սանթիմ. երե-
խեկ տղի սեղանակալ համար 20 0/0
զեղը կը լինի:

ՕՐՄԱՆԵԱՆԸ

Ամեն իզմիլիանի Պատրիարք-
քական ավանդին քաջուած կամ
քաջուիլ ստիպուած օրէն ի վեր
իր անարժան յաջորդներուն պաշ-
տօնավարութեան ապօրէն և ազ-
լին կամաց հակառակ լինելն ա-
ռաջին անգամ «Իրաւունք»ն էր որ
հրապարակեց, մատնանի ըրաւ. ու
բողոքոյ ձայն բարձրացուց: Մեր
այդ բողոքոյ ձայնին հետեւանք
ըլլալով Բարթոլոմէոսի ազատ
անունը, իբր Պատրիարքական տե-
ղապահ, բնաւ վառնալի եկեղեց-
այն մէջ չի յիշուեցաւ. և ի վեր-
ջոյ Օրմանեանի անունն ալ բա-
ւական երկար ժամանակ չէր յի-
շուած. այդ երկար ամիսներու
մէջ ոչ մի վառնացի և ոչ մի
գաղթական չի յիշուելուն դէմ
չէր բողոքած. և ինչո՞ւ բողոքէր,
քանի որ ամեն ոք գիտէր թէ
Պատրիարքական ավանդը յափը-
տակուած է հակառակ ազգին կա-
մաց և հակառակ Ազգ. Սահմա-
նադրութեան տրամադրութեանց:
այս կէտը մանաւանդ շեշտուած
էր մեր կողմէ, ուստի ալ ժողո-
վուրդին համոզումը կատարեալ
էր. Բարթոլոմէոս և Օրմանեան
պարզապէս Սուլթանին և կարգ
մը թրքապէս էֆէնդիներու պատ-
րիարքը նկատուած էին:

Բայց յետոյ երկար ամիսներ
անցնելով, Արաքէն վարդապետ,
իր հովուութեան օրով, կամացուկ
մը, առանց ժողովորդին զգալի ը-
նելու Օրմանեանի անունը յիշել
տալ սկսած է. սակայն միշտ ժողո-
վուրդը զանի Սուլթանին և կարգ
մը էֆէնդիներու պատրիարքը չը-
կատելէ չէ դադարած. այդ անու-
նի շուրջը ազգին արհամարհանքը
մնացած է ու կը մնայ ցարդ:

Իսկ երբ Օրմանեան եկաւ իր
պաշտօնավարութեամբ Կիլիկիոյ
կաթողիկոսութիւնը ջախջախել,
Ազգ. Սահմանադրութիւնը չքաց-
նել և եկեղեցւոյ բեմերէն Սուլ-
թանի անունն օրհնութիւններ և
գովեստներ շտալիլ իրեն բան
գործ ընել, ալ ժողովուրդին նող-
կանքը գազաթնակէտը հասած

էր. այլևս Օրմանեան Ազգին հա-
մար բարոյապէս մեղաւ մարդ մը
էր: Նա շատ մը պարագաներու
մէջ ապացոյց թէ ինք պատրաստ
է ազգային ամեն իրաւասութիւն
և միևնույն ամեն Սուլթանին
ոտքերուն տակը դնել, որուն մէկ
օրինակն ալ Օրմա. Գիւղի գերբեզ-
մանատան ծանօթ խնդիրն էր.
նա ազգին այդ լծակազին սե-
փակուելուն քիչ մնաց որ թուր-
քին պիտի յանձնէր, ինչէ կրօն.
ժողովոյ խմբագրող մէկ որոշումը
վրայ չի հասնէր, որով թէ ԵՐԼ-
աւը և թէ Գուլար բերանալաց
մնացին ու իսպառ ձեռքերին
հա ըջեցին. և Օրմանեան ան.
գամ մը եւս տեսաւ թէ վերադա-
տարները ազգին իրաւունքը ինչ-
պէս կը պաշտպանեն: Բայց ինք
թուլամորթ, մեղկ կեանքի վար-
ժուած ու փառասէր մարդ, ով
որ իր դէմ զօրաւոր կը տեսնէ
անոր կը հպարտակի իր գերքը պա-
հելու համար:

Հետեւեալ երբ նա այդ ստոր
ընթացքով ազգին մեղաշնորհները
և իրաւասութիւնները ձեռքէ հա-
նեց ու միշտ իր քայլերը դէպի
եւ գացին, որ հարկաւոր փոր-
ձերով ապացուցուած է. ինչ կար-
ժէ այլ ևս անկէ բարեք սպասել
և ո՞վ կրնար հաւատալ որ Օրման-
եան քաջութիւն ունենայ Սուլթա-
նին կամ Գրան ո՞ր է մէկ առա-
ջարկը (որ պահանջ ըսել է) մեր-
ժեռու. ուստի վերջերս Լա Հէյ
ուղղած իր հեռագիրն ալ իր վա-
ղածանօթ նկարագրին հետեւանքն
էր: Մենք այն ատեն շատ բան
կորուսելով, երբ իզմիլիանի տե-
ղը եկան Բարթոլոմէոսներ և
Օրմանեան: Ու մենք «չը յիշ-
ուին» այն ատենէն պրոպագանդ
և մեկ հետեւեցաւ վառնալի հայու-
թիւնը, որ այսօր ալ նոյնն է իր
վճարին մէջ: Բայց ժողովուրդը Օր-
մանեանի խնդիրը լոկ Օրմանեանի
խնդիր կանուանէ, ուստի ատոր
հետ պէտք չէ խառնել տէրտէրի,
վարժապետի, հոգաբարձուի և այլ
խնդիրներ. պէտք չէ ջուրը պղղ-
տուիլ և որսի հրել. և ամօթ է
թերթի մը մէջ գրել թէ արտա-
ուսմանի, մանաւանդ վառնալի
մէջ կայ մաս մը ժողովուրդը որ
Օրմանեանը պաշտպանել կուզէ.
չէ՛ սա օրիւր է և վառնալի հա-
յութեան անարգանք:

Թ. Գ.

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

Հայկական կրթարանի տարե-
կան հրապարակային քննութիւն-
ները պիտի սկսին վաղը, կիրակի
20 յունիս, և վերջանան յաջորդ
կիրակի, 27 յունիս:

Քննութիւնները կը կատարուին
ամեն օր, տասնօրեայ ժամը
10—12, իսկ կէսօրէ վերջ 2—5:
Ձեռագործները և գծագրու-
թիւնները ի տես գրուած են:

Ամեն ազգային ազատ է ներ-
կայ գտնուիլ քննութեանց:

Փափաքողներու կը զրկուին
ապուած ժամանակացոյցներ:

Հիմնադիր-Տնօրէն

ԿՐՈՆ ՄԻԲԱՅԷԼԵԱՆ

19 յունիս 1899

Վառնա

ՀԱՎԱՅԵՂԱՓՈ- ԽԱԿԱՆՆԵՐԸ

Ժողովուրդը իրաւամբ ծայրա-
յեղ տհաճութիւն մը կ'զգայ լը-
րագրաց մէջ իրար հարուածող
և անձնականութեան դպչող յօդ-
ուածներ տեսնելով. այս պատճա-
ռաւ ու եւ է հանրային խնդիր
յուզուած ատեն մենք կարելի ե-
ղածին չափ զգուշացած ենք ան-
ձի հետ գործ ունենալէ և կամ
այսինչը կամ այնինչը նախատե-
լէ: Մենք մեր այս սկզբունքէն
առանց չեղելու կուգանք այսօր
Շարժումի 135 թուոյն առաջնոր-
դող յօդուածին վրայ մի քիչ ըն-
թերցողաց ուշադրութիւնը հրա-
ւերել:

Այդ յօդուածի վերաբերութիւնն
է «Եւ թէ յառաջ», զոր վարդօ
կը ստորագրէ և սա խօսքերով կը
վերջացնէ:

«Ժամանակը վառնալու է. ա-
մեն մի վայրկեանը մեկ համար
թանգ: Ո՛ւր պէտք է գնայ ժո-
ղովուրդը, ե՞տ թէ յառաջ: Մենք
հաւատում ենք, որ նա առաջ կը
երթայ, միայն այն պայմանով,
որ մեր յեղափոխականները շտա-
պեն վառնալու հարուածը հա-
ցնել մեր ներքին թշնամոյն,

ՀԱՎԱՅԵՂԱՓՈԽԱԿԱՆ ՏԱՐՐԻՆ, որը
մեղ համար աւելի վնասակար եւ
վնասակար է քան քոչորքը:»

Վարդօ այս խօսքերով բացորո-
շապէս իր հակափոփոխական
անուանած տարրին մահ կամ ա-
սոր պէս բան մը կ'սպասուայ, և
յեղափոխականները կը հրաւիրէ
որ շտապեն վառնալու հար-
ուածը հաւցնելու այդ քան թուր-
քը վառնալու (իրենց համար)
տարրին:

Բայց տեսէք, վարդօի հաշուով
այդ հակափոխական տարրը
ազգին ո՞ր մասերէն կազմուած է:
Նա քանի մը առջ վերը կըսէ:

«Եւ ահա այդ միջոցին էր որ
մեծ եռանդով ապարէզ ելաւ մեր
հակափոխական տարրը՝ իր
զանազան ճիւղաւորումներով՝ ո-
րոնք կրուս են չեղոք, անգործ-
նակալ, խռով, քննադատ և այլ
տիպոսները:»

Յօդուածագիրը ազգին չէզոք,
անկողմնակալ, խոհեմ գասակար-
գը թուրքէն աւելի փաստակար և
հետեւեալ անկէ աւելի պատժոյ
արժանի գտած և այդ պատժոյն
գործադրութիւնը յեղափոխակա-
նաց յանձնարարած ատեն, ար-
դեօք մտածեց թէ այդ գասա-
կարգը ազգին մեծամասնութիւնը
կը կազմէ. և իր արտասանած
վճարակալ հարուածը եթէ մահա-
ցու հարուած է, կը նշանակէ թէ
նոր և ամենաստակալի հայկական
ճարդ մը պիտի սկսի, ան ալ հայ
յեղափոխականաց ձեռքը:

Իսկ գալով «վարդօ»ի բաժն հա-
կայեցափոխական քննադատ մա-
սին. մենք ասոր սահմանը չկըր-
ցինք սրտել: Վարդօ եթէ ըսել
կուզէ թէ յեղափոխական կուսակ-
ցութեանց գործերը քննադատող-
ներն ալ թուրքէն աւելի վառնա-
լու են և պատժոյ արժանի.
այս պարագային յեղափոխական
մէկ կուսակցութիւնը միւսին քնն-
նադատն լինելով և ասոնք նոյն
իսկ հրապարակաւ զիրար գառա-
ճան կոչած ըլլալով, վարդօի
ըսածին համաձայն, պիտի գան զի-
րար բղկոյն:

Հարցում մը —
Տրանսիս տարիներ ժողո-
վրդի բաղդին հետ խաղացող,

Ինքզինքը հերոս հռչակել փորձող
այն կարգ մը պարոնները՝ որ այ-
սօր արտասահմանի մէջ միամիտ-
ներէ դրամ կորցելէ ա' ճարահա-
տած իրենց հանգիստը ուհի մը
թեւերուն մէջ գտնել կը ջանան,
հակայեղափոխական ո'ր ճիշդաւո-
րումին արգելք կը պատկանին. և
ասոնց ինչ կարգի պատիժ պիտի
սահմանուի:

Մենք վեկորդեալ կէտերը մատ-
նանիչ ընելէ և յիշեալ յօդուածին
տարօրինակութիւնները բացատրե-
լէ յետոյ վճիռը ժողովուրդին կը
թողուի:

Այս կարգի ուղեցոյցներու ու
խորհրդատուներու շնորհիւ արդ-
եօք ապագայ Հայաստանը պիտի
կանգնենք: «Վա' քեզ քաղաք
տէրդ մանուկ է:»

ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

Բարիդի մեր քղաքիցը ետուպա-
կան աղբիւրներէ քաղելով հե-
տեւեալ տեղեկութիւնները
հաղորդած է մեզ

Վերջերս Անգլ. խորհրդարանին
մէջ երեսփոխանի մը կողմէ կա-
ռավարութեան հարցապնդում մը
ուղղուեցաւ, հայկական խնդրի և
իմաստաւորի Մշոյ կողմերու վեր-
ջին կոտորածներու մասին. երես-
փոխանը եզրակացուց, հրաւիրե-
լով կառավարութիւնը հետեւիլ
Ֆրանսական ու իտալական գեա-
պանաց և հաւաքական ու ազգու-
երկրորդ բողոքագիր մը եւս տալ:
* * * Կ. Պոլսէն «Տէյիթ Թէյէկ-
րաֆ»-ի կիմացնեն թէ Յարութիւն
փաշա «Դրօշակ» թերթի վերջին
թիւերէն միոյն մէջ իր երեք նա-
մակներու հրատարակուած լինելը
տեսնելով ու Սուլթանին խոստում-
ներուն վրայ իր ալ տուած խոստ-
մանց ցարգ չի գործադրուելուն
պատճառաւ խառն եւ փաղաքա-
կան ժողովոց ատենապետութենէն

ԲՈՒՆՈՒԹԵԱՆ ՏԱԿ (19)

ԺԱՄԱՆԱԿԱԿՈՅ ՀԱՅ ԿԵԱՆՔԷ ՊԱՏԿԵՐ ՄԸ

ՄԱՍՆ ԱՌԱՋԻՆ

Ալի էֆէնտի վերջին հարցաքննու-
թեան մաքուրը քաջելով, օրագիրն ալ
պատրաստեց, որուն մէջ կամբաստան-
ուէր Յովհաննէս Նիկողոսեանը իբր
քաղաքական յանցանոր մը որ յեղա-
փոխական արարներու մէջ գտնուած է
եւ թերթեր ստանալով կը ցրուէ
զայն Ակն քաղաքին մէջ եւ շրջակա-
ները. այդ կարգ մը ամբաստանու-
թիւններուն իբր ատաղջին փաստ վկա-
յութեան կը կոչուէր Գ. Ն ստորագրու-
թեամբ մեր ընթերցողներուն ծանօթ
կեղծուած նամակը: Պաշտօնաթղթերը
պատրաստելէ ետք, Ալի էֆէնտի գա-
նոնք Բիզա էֆէնտիին ներկայացուց,
որ զանոնք կարդացած ատեն անսո-
վոր ուրախութիւն մը զգաց կանոնա-
ւոր շարադրութիւնը տեսնելով:


Իսպառ հրաժարած է, ուխտելով
այլ ևս հայկական հարցով երբէք
չգրաւիլ ու չմիջամտիլ:

* * * «Սթանտարտ»-ի Կ. Պոլսոյ
թղթակիցը կը գրէ թէ՝ Ձարը
հայոց Լա Հէյ ղրկած պատուիրա-
կութեան կողմէ եղած դիմումներ-
րէն խիստ զգածուելով, դեսպան
Ջէնովիէի պաշտօն յանձնած է
Բեթերսպուրկէ Պոլսի վերադար-
ձին Սուլթանին բողոքել հայկա-
կան գաւառաց ու թրքահայոց կը-
րած անվերջանալի տառապանաց
դէմ: Սուլթանը ասոր ի պատաս-
խան խոստացեր է յանցաւոր
թուրքերը ձերբակալել ու խստիւ
պատժել:

Միւս կողմէ «Թայմ» հեռա-
գիր մը հրատարակած է, որ կը
ըսէ թէ կողկասի գաղթական հա-
յերը կրեաէի մէջ հաստատուի-
տալարկը Ռուսիոյ կողմէ եղած
է որ Սուլթանին շատ հաճելի թը-
ւեր է:

* * * Լա Հէյի մէջ վերջապէս
հակաթրքական բանախօսութիւն-
ներ տեղի ունեցած են, ուր յա-
ջորդաբար խօսք առած են Ահմէտ
Րիզա էֆ., հայոց կողմէ Պ. Ան-
մեղեան, նաեւ Ս'ակեղոնական և
այլ պատուիրակներ:

ՍՈՎՆ ՌՈՒՍԻՈՅ ՄԷՋ



Բեթերսպուրկէ կը հեռագրեն.
«Անցեալ տարուան հունձքե-
րուն անյաջողութեան ահաւիտի հի-
տեւանքները տակաւին չմոռցուած
ո'չ ժողովրդեան և ոչ ալ կառա-
վարութեան կողմէ, նմանօրինակ
ուրիշ աղէտ մը այսօր կ'սպառ-
նայ Հարաւային Ռուսիոյ բնդմա-
ւոր գաւառներուն: Ներքին գա-
ծոց նախարարին հեռագրուած է
թէ Քիէվի, Գոլլապոլի, Պեսա-
րապոլի, Քէրսոնի և Դաւրիտի
նահանգներուն մէջ գրեթէ ամս
նուրբ անգոհացուցիչ է աշ-
նան մէջ ցանուած ցորենին վե-

«Ալի էֆէնտի, ըսաւ Բիզան, եթէ
ծանօթ հարցը չկարգադրուեցաւ Մի-
նասի եւ Յովհաննէսի մէջ այն ատեն
վաղը չէ միւս օր Յովհաննէսը Մէղի-
րէ պիտի զրկուի:

—Գլխու վրայ էֆէնտի:
—Ուրեմն վաղը առաւօտ երբ Մի-
նասը գալ թո'ղ թոյլատրուի իրեն որ
բանտ երթալով տեսնուի ամբաստան-
եալին հետ:

—Հիմա իսկ երթալով պէտք եղած
հրահանգը պիտի տամ էֆէնտիին:

—Երեկոյն ալ մեր տունը հրամմէ'.
յիսուն ոսկին Մինասէն ստացալ. քո-
րածինդ պիտի տամ. իմ բաժինէս ալ
պզտիկ բան մը պիտի հանեմ Պու-
տաքեանին եւ Նախնիքեանին որով-
հետեւ անոնք ալ ամեն ատեն մեղի
պէտք եղող կիսան կովեր են:

—Շատ արդարացի է էֆէնտի, պա-
տասխանեց Ալի էֆէնտի գողալով որ
իր բաժինին ալ չդպչուի:

Ալի էֆէնտի այս խօսքերէն ետք
գոհ սրտով գուրս ելաւ, մինակ թող-
լով կաշառակեր քայմաքամը իր կեղ-

ճակը՝ տաքութեան և երաշու-
թեան հետեւանքով: Բնակչաց մի-
ակ յոյսը մնացած է այս տարի
գարնան առաջին օրերուն ցանուած
հունձքերուն վրայ: Քապանէ և
կած լուրեր կիմացնեն թէ այդ
նահանգին մէջ ալ գէշ վիճակի
մէջ է աշնան ցանուած ցորենը:
Կայսրութեան հիւսիսային և հիւ-
սիսային արեւմտեան կողմերը
վերջին աստիճան անգոհացուցիչ
է հնձոց վիճակը՝ ցուրտի, կար-
կուտի և անձրեւի հակառակմարտ
ազդեցութեանց հետեւանք: Այս-
պէս է մանաւանդ Բեթերսպուրկի,
Նովկորոտի և Բաքովի նահանգնե-
րուն մէջ: Քաղանի, Սիմպիրաքի
և Ուֆայի նահանգներէն եկած
վերջին լուրեր ալ աւելի գէշ կը
ներկայացնեն սովի և հիւանդու-
թեան պարագաները: Պաշտօնա-
թերթը կը յայտարարէ թէ վեր-
ջին երկու գաւառներուն մէջ մի-
այն բժիշկները մինչեւ մայիս 13
արձանագրած են 34,114 հիւանդ-
ներ ժանտախնդէ և ընդագորու-
թենէ, մինչդեռ այս ահագին թը-
ւով հիւանդները դարմանելու հա-
մար կան միայն 13 բժիշկ և 180
հիւանդապահ. կամ մէն մի բժըշ-
կի համար 176 հիւանդ: Արքան-
կելէ եկած հեռագիրներուն նայե-
լով, այդ նաւահանգստին շրջա-
կաններն և Սպիտակ ծովուն ամ-
բողջ արեւմտեան ափունքը սառ-
նակոյտերով գոցուած են, 15 շո-
գենաւեր անկարող են անցնիլ
Քոնստնտնուպոլիս հրահանգանէն
զէպի ովկիանոս, և ամեն հաղորդակ-
ցութիւն խզուած է Սուլթանցի
վանքին և Սուլթանեան ծովափեր-
եաց նաւահանգիստներուն հետ:
Տարւոյն այս նշանակին մէջ իրաց
այսպիսի վիճակ տարօրինակ է:
Նովոէ վրէժիա կըսէ թէ վերջին
15 օրուան մէջ բարեխառնութիւ-
նը նուազած է ո'չ միայն Ռու-
սիոյ հիւսիսային և հիւսիսային
արեւելեան կողմերն, այլ նոյն
իսկ կեղերական նահանգներուն
մէջ, Ռէսովիի շերմաշափը զրօ-

տոտ խոհերուն հետ:

Այդ օրը երեկոյեան տիկին Վերգի-
նէ իրենց ծառային ընկերակցութեամբ
բանտ եկաւ ամուսինին երես տեսնե-
լու համար, Վահրամի հեռանալը իմա-
նալով ինքզինք բոլորովին լքուած
զգալէ վերջ. սակայն չարտօնուեցաւ
իր փափագին հասնելու:

Յովհաննէս աղայի տունը առանց
էրիկ մարդու չմնաց, որովհետեւ բան-
տակալին ժամանակի մը համար Ար-
ման պանուկ Գէորգ եղբայրը՝ զիպ-
ուածով քաղաք վերադարձաւ: Գէորգ
աղան իսուն հինգ տարեկան անձ մըն
էր. ամուսնացած ի վերջոյ այրի մնա-
ցած. զաւակ եւ. չունէր. բաւական
կոկիկ դրամագլուխի տէր. Յովհաննէս
աղային պէս բարի էր ինքն ալ,
սակայն բնաւ որութիւնը երկջոտ
եւ թոյլ էր. այն աստիճան որ
լսելով եղբորը ձերբակալուելուն լուրը
չհամարձակեցաւ իր կարգին քայմաքա-
մին քովը երթալու, եղբայրը տեսնե-
լու արտօնութիւն ստանալու համար,
այնպէս որ այդ հոգն ալ տիկին Վեր-

էն 3—5 աստիճան վար իջած է,
ձիւն, կարկուտ և ցուրտ անձրեւ-
ներ բերելով, Օղային բոլոր այս
անկանոն պայմանք շատ ծանր
մտահոգութիւն կը պատճառեն ցո-
րենի և խոտեղէններու, նաեւ
վուշի և գետնախնձորի հունձքե-
րուն համար որք կարեւոր տեղ մը
կը բռնեն հիւսիսային նահանգ-
ներու գեղջկային տնտեսութեան
մէջ: Ցուրտը կասեցուցած է ցո-
րենի աճումը վաղայի ալ ափանց
վրայ Բէնկայի հիւսիսային գաւա-
ռաց մէջ, և անդրվոլկան նա-
հանգներուն ամբողջ կեղերին
մէջ: Միեւնոյն ժամանակ արեւելե-
ան նահանգներուն մէջ սոճի ա-
ւելի ահաբեկիչ հետեւութիւննե-
րով կիւրեւի, և իր սաստկութեան
ամեն աստիճանով, որուն նմանը
չը կայ Ռուսիոյ արդի պատմու-
թեան ծանօթ ժողովրդային աղէտ-
ներուն մէջ:»

ԿՏՐԻՃԻ ՄԱՂԻ

Ինկած է քաջը կրծքով վիրաւոր
Սեւ լերան կողքին.
Ու դա՛ռն մաղձոտ վշտեր բխաւոր
կը հրածեն հոգին:

Մէկ ձեռքը յենած ժայռերու գոգին,
Ի՛նչեր մթազին,
Միւսով խոր վէրք սեղմած դառնագին
կը տընքայ ուժգին:

Կը պատեն ամպեր մոայլ խաւարչին
ձակատը տեսնող.
Տօգոյն չըթուենքէն բառեր կը թռն-
Անէճքներ շանթոտ:

Լանջը կը հեւայ արիւնով պատած.
Դժուր, ուժասպառ,
Սրտին զարկերը՝ կարծես ալ հատած՝
Դադրին պիտի խաւար:

Մերթ իր հայիացքը երկինք սեւեռած
Կը նայի աղու.
Մերթ ալ գետինը, սեւ ժայռին ծրակ
Արցունք կը հեղու:

Ստէպ կը ժայթքեն մաղձոտ հառաջներ
Իր սրտի խորքէն,
Կարմիր մարգարիտ—արեան կաթիլին
Կը ցայտեն վէրքէն:

գինէ ստանձնելու պարտաւորեցաւ:

Վերջացնելը այս գլուխը ըսելով որ
վահրամի անյայտացումն ալ խորհրդա-
ւոր փափուքներու տեղի տուաւ. ան-
կեղծ, երիտասարդ ընկերները ամենէն
սրտոտ ցաւը զգացին անոր փախուստը
լսելով. մէկը չկրցաւ ըսել թէ ինչ
ո, զղութեամբ, ո'ւր հեռացած էր: Բայց
մենք գիտենք թէ վահրամ Գրիգորի
շաղաքը հասնելով, անոր եղբոր
Մկրտիչին հետ մէկ մէկ ձի հեծած կի-
րսոտնի ճանքան կը կտրէին:

Ժ՛ի.

Յովհաննէս աղայի հորրորդ եւ վեր-
ջին նախնական հարցաքննութեան
յաջորդ օրը դաւաճան Մինաս առաւօ-
տուն կանուի առնէն երեկոյով բանտ
եկաւ. Ալի էֆէնտիի ստորադասեալ
փոխնիքէն մին իր քոմիսէրէն ատաժ
հրահանգին համեմատ իրեն առջեւ ե-
կաւ:

«Ի՞նչ հրաման ունիք Մինաս աղա՛
—Կարծեմ քեզ հրահանգ տրուած ըլ-
լալու է. Յովհաննէս աղայի բանտը

Ինկած է քաջը կրծքով վիրաւոր
Սեւ լեռան կողքին
Ու դա՛ռըն, մաղձոտ վշտեր բխաւոր
Կը հիւճեն հողին։

* * *

Ելաւ լուսինը. նոր հարսն անուշիկ
Շրջաւրը ամպերէն,
Սահիլ սկսաւ հանդարտ ու յուշիկ
Երկնից կամարէն։

Թափեց շողերը պայծառ, գեղեցիկ
Մէջ մութ ձորերուն.
Պատեց կատարը լոյսով թափանցիկ
Հսկայ լեռներուն։

Գետակին վրայ ցուրբեր են ինկած
Արծաթ լուսնակին
Ու իր ջրերը վառած՝ բոլորնկած
Են մութ լճակին։

Պատկած է քաջը արեամբ չաղախուած
Դալուկ, սգեւար,
Շուրջը կը թուի մթին ամպամած—
Աչերն են խաւա՛ր...

Հանջը ուռեցուց կարիճը անուժ
Ու խոր հառաջեց,
Գլուխը ձգեց ժայռերուն անյուշ՝
Ու շուշը փչեց...

...Անցաւ գիշերը։ Ծագեց վառ Արփին
Պայծառ լուսափունջ
Իսկ հոն կարիճը, լճակի ափին
Պատկած է անշուշն։ (*)

Տիգրան Երուանդան
12 յունիս 99
Ռուճուբ

ԵՐԱՍՄԱՆ ՀԱՇՈՒԵԿԵՐԻ
ԱՂՔԱՏԱՆԱՍ ՄԱՍՆԱՍԻՓԻ Փ ՊՈԼՍՈՅ
1899 Սարտ 1էն մինչ 31 մայիս
ՄՈՒՏԲ 154

Նախորդ հաշիւէն Գան.
ձագինտին քով 7. 05

Շրջաբերող շաբաթական
գանձանակին հասոյթը 244. 95

Ծրագրագրողի օրուան

(*) Ռուճուբէն դպրոցական պատա.
նի մը խնդրած է մեզմէ սոյն ոտանա-
ւորը թերթիս մէջ հրատարակել. մենք
զինքը քաջալերած ըլլալու համար,
չուզեցինք այդ խնդիրքը մերժել, նկա-
տելով մանաւանդ թէ նա իբր դպրո-
ցական իր այս փորձին մէջ բաւական
յաջողած է։

առաջնորդէ զիս, պատասխանեց Մի-
նաս չիոթ ձայնով մը։

Պահապանը համակերպեցաւ, նշանա-
ցի ակնարկ մը նետելով իր առջին որ
«Ինձ հետեւէ» ըսել կը նշանակէր։
Բանալին զուտը բացուեցաւ։ Վաւաչոտ
Մինաս զեռ եւս ներս չմտած ուժգին
մերժումի մը ինքնակողմնաւոր սարսափով
համակուեցաւ պահ մը. պէտք է ըսել
որ ակարացաւ իսկ. սակայն բռնուն
ճիգով մը ինքզինքին եկաւ եւ ան-
տարբեր ու պաղ նայուածքով մը զըռ-
նէն ներս մտաւ։ Յովհաննէս աղա
չատուց սրթնցած էր. երեսը պատու-
հանին կողմը դարձուցած էր որ գրե-
թէ զրան հանդիպակաց կողմը կիշնար.
կը թուի թէ խորունկ մտածութեան
մէջ թաղուած էր. զրան բացուելէն
առաջ եկած ազմուկը իր ուշադրու-
թիւնը չհրաւիրեց. այսպիսի անակըն-
կալ այցի մը չէր սպասեր. առաւօտուն
կանուխ շատ շատ ներս մտնողը բան-
տապահը պիտի ըլլար, որուն ներկա-
մութիւնը թուրք ամեն պաշտօնականի
համաւասար ատելի էր։ Մինաս լկտի

պնակներէն 37. —
Չտակի առթիւ կատար.
ուած հանգանակութե.
նէն 140. —

Չտակի առթիւ նուէր 2. —
Միթիւնկին հանգանա-
կութեան աւելցած նուէր 5. —
Գեղազերի մը արժէքին
կէսը վերադարձուած 1. 20

ԵԼԲ 407. 20

Հիւանդի համար կաթ և
մսի շուր 4. —
Գնուած փայտ, կտրու-
ղէք, բեռնակրողչէք 8. 80

Թղթատարի ծախք — 30

Աղքատախնամի համար
պահարանի կապանք 1. 20

Աղքատաց պատահական
նպաստ 2. 50

Աղքատաց շաբաթական
նպաստ 66. —

Աղքատաց հացագին 19. 85

Բժշկին կառքի ծախք 3. —

Դեղորէից փխրաբէնը 41. 45

Գանձանակը պատցընո-
ղի վարձք 26. —

Տնտես Տիգրանին նուէր 5. —

Գործողութեան պէտք
ունեցող հիւանդ տիկնոջ
մը Պոլիս զրկուելու ծա-
խուց օգնութիւն 15. —

Կարօտ նորեկի մը կտրու-
սիքը կրկնութեան հանե-
լու 10. 50

Կառուպան Սիւքոնին ձի
մը առնելու օգնութիւն 10. —

Չտակի առթիւ 29 աղ-
քատաց տներն բուշ-
խուած նպաստ 121. —

Չտակի առթիւ տնտես
Տիգրանին հագուստ 25. —

Չտակ. առթ. ծաղքատի
հագուստ և կօշիկ 10. 80

Չտակ. առթ. բաշխուած
զգեստներուն համար
մանր պիտոյք 6. —

Գանձապետին քով պատ.
րաստ դրամ 40. 80

407. 20

յարգական ձեւով մը Յովհաննէս աղա-
յի առաջն անցաւ եւ բարեւեց զայն։
Յովհաննէս աղան անոր ձայնը լսելով
թո՛ք խայթուածի մը պէս ցնցուեցաւ։
Սակայն ինք ալ չկրնար ըսել բացառու-
թիւն մը առ ինչ իր զգացած սար-
սառնին, ո՛չ ալ Մինասի անսպասելի
այցելութեան ինքզինքը ամփոփեց.
մինչեւ իսկ պահ մը խաբուելով սկա-
րութիւնը ունեցաւ մտածելու որ ա-
մենէն մտերիմ բարեկամը եղած պիտի
ըլլար Մինաս աղան քանի որ երեք օ-
րէ ի վեր բանտն էր եւ իր կարծիքով
ոչ ոք եկած էր իր վիճակին վրայ տե-
ղեկութիւն առնելու. այսպէս կը մտա-
ծէր ինք քանի որ առ այդ սրբիւք մը
կեցած ըլլալու մասին դադափար իսկ
չուէր։

«Բարի եկաք Մինաս աղա, գոհ եմ
որ զիս յիշեցիք։ Ամենքը զիս մոռցան
նոյն իսկ ամէնէն սրտակիցներս, ըն-
տանի քս. երեք օր է բանտն եմ եւ ոչ
ոք եկաւ տեսնելու զիս։

— Կը սխալիք Յովհաննէս աղա, ընդ-
հակառակը քանիներ եկեր են, նոյն-

Աղքատախնամի իւր շնորհակա-
լութիւնն կ'ազդէ տ'յն ամէն ո.
զորմասէր ազգայնոց, որք դրա-
մական նպաստներով և կերպաս
«խառէ» և պարէն նուիրելով
փութացին միմիկարել քաղաքիս
աղքատներն Ս. Չտակի առթիւ։

Ի Դիմաց Աղքատախնամի
Առեւնադար Առեւնադար
Ա. Յ. Սըլաճեան Գ. Դաւիթեան
Փ. Պոլիս
5 Յունիս 2899

ԼՐԱՔԱՂ

Բարեկէն կը գրեն մեզ. «Տ.
Չերազ, Կ. Պոլսէ տեղեկութիւն
առած ըլլալով որ Օրմանեան իւր
պաշտօնին աննպաստ հեռակիր
ուղղել է թաղ. վեհաժողովի նա-
խագահին և թուրքաւոր բռնա-
խոսուած առեր է Պ. տը Ստատ.
լէն որ Հայոց խնդրագրները չը
յիշատակուին ատենագրութեանց
մէջ. յունիս 15ին Բարեկէն նա-
խագահին ուղղեց հերքման.
գիր մը, որոյ պատճէնը հրա-
տարակուեցաւ Լա Հէյի Տակալա.
տին մէջ (18 յունիս)։ Տ. Չերազ
այս առթիւ Պ. տը Ստատլին հա-
ղորդեց վառնայի, Թուսուգի,
Տօպրիշի, Ֆիլիպէի, Պալլըքի և
Թաթար. Բազարճի միթիւններ.
բու պաշտօնագրերն ալ որոնք ուշ
հասած էին իրեն. նաեւ տեղեկու-
թիւններ Գահրիբէի միթիւնին և
Պուգրէշի ազգայնոց մեծամաս-
նութեան համամտութեամբ նկատ.
մամբ։»

— Թուրքաւոր Տէր Երեսուք զհնյ.
Թովհաննէսեանի դէմ ամբաստա-
նագրեր հասած էին մեզ, որոնց
վրայ հիմնուելով ի կարգ հրաւի-
րած էինք յիշեալ քահանան։ Այ-
ժմ նոյն քաղաքէն ստացանք
հանրագրութեան ձեւով հերքման.
գիր մը 35 ստորագրութեամբ,
որք անմեղ և պարտաճանաչ կը
հռչակեն քահանան և ամբաստա-

պէս ձեր արկիւնը. սակայն ձեզ հետ
տեսնուելու համար կառավարական ար-
գելք կայ։

— Բայց ինչ պատճառ կայ որ այս
արգելքը դրիւ են, բան մը որ ուրիշ
բանտարկեալի մը համար որքան ա-
տեն որ կը յիշիմ չէ գործադրուած։

— Անցած բարի ժամանակներուն վը-
րայ կը խօսիք. բայց հիմայ ատենք
անցան. չէք գիտեր թէ ո՛րքան փա-
փուկ աստիճան մէջ կ'ապրիք. ձեզ հա-
մար այդ արգելքի գրուելուն զխաւոր
պատճառը այն է որ իմացածիս նայե-
լով դուք քաղաքական յանցանքով
ամբաստանուած էք. հաղիկ հազ, հա-
կառակ մտերմական յարաբերութիւն-
ներու, յաջողեցա՞յ ձեր մօտ մտնելու
համար արտօնութիւն առնել քայմա-
քամ Ռիզա էֆէնտիէն։

— Եւ հաւատարմի՞ք որ ես քաղաքա-
կան յանցանք մը գործած ըլլամ, ըսաւ
Յովհաննէս աղա զողորմուն ձայնով մը։

— Ե՛, տէր Աստուած, ինչ կրնամ
խել. գէթ քայմաքամ Ռիզա էֆէնտի-
ին խօսքը այն է որ քաղաքական յան-

դներուն կը վերագրեն ինչպէս
նպատակներ։ Ցուալին այն է որ
ճշմարտութիւնը երեսան հանելու
համար պաշտօնական մարմին մը
չը կայ այդ քաղաքի մէջ. թող.
Խորհուրդը գոյութենէ դադարած
է, ժողովուրդին մէջ անհամաձայ-
նութիւն կը տարէ և ոչինչ։ Այս
բոլորին իրր դարձան կառավար-
կէնք որ թուրքայի ազգայնիք ջա-
նան օր մը առաջ թող. Խորհր-
դոյ ընտրութիւնը կատարել և ի-
րենց տրտուծները այդ պաշտօ-
նական մարմինն ներկայացնեն,
փոխանակ լրագրաց մէջ իրար հակա-
սող գրութիւններ հրատարակել
տալու, որ շատ անգամ օգտակար
չըլլալէ վատ կերբերը սեւելի բոր-
բոքելու պատճառ կրլլայ։

— Քաղաքիս եկեղեցւոյն մէջ
ժամանակէ մը ի վեր պաշտօնա-
վարող Գեորգ քհն. Հիւրմուղեանի
գաղապարտութեան վճռագիրը
կրօն. Ժողովոյ կողմէ յունիս 5
թուականաւ հաղորդուած է տեղ-
ւոյս Աւագերեցին։

Այդ վճռագրոյն համեմատ Գէ-
որգ քհն. կարգիւրէի մայիս 12է
սկսեալ երեք տարի բահանայա-
գործութենէ. իր կատարած Ապ-
տարեան Մանուկի պսակագրու-
թիւնը չեղեալ կը նկատուի։

Իրօք կրօն. Ժողովոյ սահմա-
նած պատիժը բաւական ծանր է,
բայց տէր հայրն ալ մինչեւ ցարդ
իր գործած զեղումներու ահագին
գէշը ու առանց պատժոյ օձիքը
ազատած ըլլալն նկատի առնելով
կրնայ ինքզինքը միթիւնի և
նոյն իսկ «աժան ազատեցայ» ըսել.
Ականջին խօսի Ազ. Եֆէնդիան.
բուն, խեղճերը ինչեր քաջած են
այս անուղղայ քահանային ձեռ-
քէն. այժմ ալ լրագրաց մէջ անոր
պատժուիլը իմանալով «հազ եէ-
րինի պուլտը» պիտի ըսեն։

— Տեղացի կարգ մը երիտա-
սարդներու կազմէ ինչպատ Տիար
Յ. Չաքրեանի տրուած թատերա-
կան ներկայացման հաշուեցուցիկը
հրատարակութեան համար մեզ

ցանքի մէջ գտնուած էք եղեր։

— Երբէ՛ք, Մինաս աղա, երբէք, ա-
րիւնկզակ ոտի մը թափեց այս ալէ-
տը զլուխիս եւ տունս արիւն լացուց.
բայց տէրը մեծ է եւ ողորմած։»

Մինաս «արիւնկզակ ոտի» իր
ցնցուեցաւ. հարուածը չեղաւ իրեն
ուղղուած էր թէեւ Յովհաննէս աղա
ատր ցիտակցութիւնը չունենար։
Երկու վայրկեան լուրջնէն ետք ամ-
բաստանեալ հարցուց.

«Արդեօք բան մը կրցա՞ք հասկնալ
իմ մասին, քայմաքամը վախճանիս
մասին բան մը խօսեցաւ։

— Հակառակ ձեր մէջ եղած տխուր
միջապէսին, նորէն համոզուած եղէք
որ ձեզի համար բարեացակամ է. բայց
ինչ կարծէ իր բարեացակամութիւնը
քանի որ օքէնքի հաւատարիմ պաշտօ-
նակալ մ'է. եթէ ստոյգ են լրանար,
քանի մը օքէն զքեզ Մէղրիէ պիտի
զրկեն անկէ ալ Աքեա։

